Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պարտապանին և/կամ երրորդ անձ գրավատուներին պատկանող գույքը աճուրդով (կրկնաճուրդով) վաճառելու մասին

Թիվ ՄՆԴ/1128/04/23 սնանկության գործով կառավարիչ Արթուր Ապիկյանը ղեկավարվելով ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» թիվ 116-Ն հրամանով և ՀՀ Սնանկության դատարանի /դավատոր՝ Ա.Հովհաննիսյանի/ 11.08.2025թ-ի «Գույքի վաճառքը թույլատրելու մասին» որոշմամբ աճուրդի է ներկայացնում օտարման ենթակա, պարտապան Աշոտ Մանուկյանի պարտավորությունների համար գրավադրված, երորրդ անձանց համատեղ սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը.

- **Լոտ 2. Անշարժական գույք – Մարզ Շիրակ, ք. Գյումրի, Ղանդիլյան փողոց 47, շենք 35 հասցեում գտնվող բնակարան /անշարժ գույքի նկատմամաբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 19062019-08-0018, տրված 19.02.2022թ/: Նկարագիրը- Անշարժ գույքինպատակային նշանակությունը բնակելի, օգտագործման նպատակային նկանակությունը բնակարան, հարկայնությունը՝ 5 հարկանի շենքի 3-րդ հարկ, ընդհանուր մակերեսը՝ 66,4 քմ, Միջհարկային բարձրությունը՝ 2,7 մ, դռները՝ Մուտքի դուռը՝ մետաղական, ներքին դռները՝ ՄԴՖ, Մետաղապլաստե, Պատուհանները՝ Մետաղապլաստե, Սենյակների ներքին հարդարումը (1-8 բալ) որտեղ լավագույնին համապատասխանում է 8 բալ Պատերը պաստառապատ, հատակը սլիկապատ, ընդհանուր գնահատականը՝ 6 բալ: Խոհանոցի ներքին հարդարումը(1-8 բալ) որտեղ լավագույնին համապատասխանում է 8 բալ՝ պատերի տնտեսական մասը սալիկապատ, մյուս մասը պաստառապատ, հատակը սալիկապատ, ընդհանուր գնահատականը՝ 6 բալ: Սանհանգույցի և լոգարանի ներքին հարդարումը (1-8 բալ) որտեղ լավագույնին համապատասխանում է 8 բալ՝ պատերը և հատակը սալիկապատ, 6 բալ: Ինժեներական ցանցերը, կոմունիկացիաները՝ Էլեկտրոմատակարարում, գազամատակարարում, ջրամատակարարում, կոյուղի, ջեռուցման համակարգ:**
  Սեփականատերեր՝ երրորդ անձ գրավատուներ - Երեմ Մանուկյան Աշոտի, Քրիստինե Աղաբաբյան Աշոտի:
  Երրորդ անձ գրավառու «Կոնվերսբանկ» ՓԲԸ
  Մեկնարկային գինը՝ 10 156 428 ՀՀ դրամ:

<u>Աճուրդի կազմակերպչի անվանումը և կոնտակտային տվյալը՝</u>

Թիվ ՄՆԴ/1128/04/23 սնանկության գործով պարտապան Աշոտ Մանուկյանի սնանկության գործով կառավարիչ Արթուր Ապիկյան

e-mail:arthur.apikyan@gmail.com.

<u>Աճուրդի անցկացման վայրը՝ ք.Երևան, Արշակունյաց պող. 5 թիվ 109 սենյակ</u>

<u>Աճուրդի անցկացման</u> օրը և ժամը՝ 2026թ-ի հունիսի 29-ին ժամը 12:00-ին .

Աճուրդի մասնակցության հայտի ներկայացման կարգը և վայրը.

- Աճուրդի մասնակցության հայտը պետք է ներկայացվի ՀՀ սնանկության դատարանի գրասենյակ (հասցեներ՝ ք. Երևան, Օտյան 53/2, Շիրակի մարզ, Գյումրի Անկախության հրպ., 7 շենք) ոչ շուտ քան աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահը և ոչ ուշ քան մինչև աճուրդի անցկացման օրվան նախորդող 5-րդ աշխատանքային օրը՝ 24.06.2026թ. ժամը 18:00-ն :
- Հայտում պետք է նշվեն.
  1) հայտատու իրավաբանական անձի անվանումը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, իրավաբանական անձի ներկայացուցչի (նրա անունից հանդես եկող անձի) անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները.
  2) հայտատու ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները, ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները.
  3) պարտապանի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը).
  4) աճուրդի անցկացման օրը, ամիսը, տարեթիվը և լոտի համարը.
  5) կառավարչի անունը, ազգանունը.
  6) հայտին կցվող փաստաթղթերի ցանկը :

Հայտատուն հայտում նշում է կատարում նաև այն մասին, որ տեղեկացված է, որ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին և որ դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում): Հայտատուն կրում է իր կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումները չկարդալու անբարենպաստ հետևանքները:

Հայտը ստորագրվում է հայտատուի (նրա անունից հանդես եկող անձի, ներկայացուցչի) կողմից:

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

- Աճուրդի մասնակցության հայտին կից անհրաժեշտ փաստաթղթերն են՝
  1) լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.
  2) լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը աճուրդի մասին հայտարարությունում նշված սնանկության հատուկ հաշվին կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը.
  3) լիազորագիր, եթե հայտատուն հանդես է գալիս լիազորված անձի միջոցով.
  4) իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները.

5) անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները.
6) անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Աճուրդի նախավճարի և մասնակցության վճարի չափը, և լոտի գնի վճարման կարգը.

• Աճուրդի մասնակցության վճարման չափը կազմում է լոտի մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը:

• Աճուրդի նախավճարիվճարման չափը կազմում է լոտի մեկնարկային գնի 5 (հինգ) տոկոսը: Լոտի գինը վճարվում է աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրելուց հետո՝ տասն օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը:

• Աճուրդի մասնակցության վճարը, նախավճարը, լոտի գինը վճարվում են անկանխիկ եղանակով
Աշոտ Մանուկյանի սնանկության հատուկ հաշվին՝ ՓԲԸ 16043047000724 «ՎՏԲ-Հայաստան բանկ»:

Աճուրդի ձևը, աճուրդի անցկացման և հաղթողին որոշելու կարգը.
Պարտապանի և երրորդ անձ գրավատուների գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքն իրականացվում է սնանկության գործով կառավարիչի կոցմից բաց աճուրդով, դասական եղանակով մեկնարկային գնի բարձացմամբ, որի ընթացքում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որն առաջարկել է առավել բարձր գին: Աճուրդի անցկացման, հաղթողի որոշմանկարգի և աճուրդի ձևի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք ծանոթանալ ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» թիվ 116-Ն հրամանում:

Աճուրդում հաղթած մասնակցի կողմից վաճառքի գնի վճարման ժամկետները.

• Աճուրդում հաղթած և աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը ստորագրած անձը պարտավոր է վճարել լոտի վաճառքի գինը արձանագրությունը ստորագրելուց հետո՝ տասն օրվա ընթացքում՝ նվազեցնելով վճարված նախավճարի չափը: Նշված ժամկետում վաճառքի գինն ամբողջությամբ չվճարելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում: Վաճառքի գինն ամբողջությամբ վճարվելուց, այն փաստացի սնանկության հատուկ հաշվին մուտքագրվելուց և սահմանված վճարումների կատարումը հավաստող փաստաթղթերը կառավարչին ներկայացնելուց, սնանկության դատարանի կողմից լոտի նկատմամբ առկա սահմանափակումները վերացնելուց, հաղթողի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը կառավարիչին

ներկայացնելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում կնքվում է լոտի առուվաճառքի պայմանագիր:

• Եթե աճուրդի արդյուքների մասին արձանագրությունըստորագրելուց հետո տասն օրվա ժամկետում կառավարչի՝ որպես վաճառողի, աճուրդի հաղթողի՝ որպես գնորդի (գրավատուի) և այլ անձի՝ որպես գրավառուի, միջև կնքվում է առուվաճառքի և գրավի (հիփոթեքի) պայմանագիր, ապա այդ պայմանագրով գույքի վաճառքի գնի վճարման ժամկետը սահմանվում է պայմանագրի կնքման օրվանից՝ 5 աշխատանքային օր: Սույն կետում նշված կարգով վաճառքի գինն ամբողջությամբ չմուծվելու դեպքում աճուրդը համարվում է չկայացած, իսկ այդ աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը և մասնակցության վճարը չեն վերադարձվում:

• Եթե աճուրդին մասնակցելու իրավունք ստացած անձը աճուրդին մասնակցում է, սակայն չի հաղթում, ապա այդ անձի դիմումն ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքումաճուրդի նախավճարը վերադարձվում է դիմումում նշված բանկային հաշվին, իսկ աճուրդի մասնակցության վճարը վերադարձման ենթակա չէ: Սույն կետով նախատեսված դիմումը կարող է ներկայացվել մինչև սնանկության գործի ավարտը:

• Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:

Լոտն ուսումնասիրելու ժամանակը, վայրը և կարգը

Մասնակիցները վաճառվող լոտերին կարող են ծանոթանալ սույն ծանուցման հրապարակման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում լոտի գտնվելու վայրում, կամ նախապեսնամակ գրելով աճուրդի կազմակերպչի *Arthur.apikyan@gmail.com* էլեկտրոնային փոստին յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00 մինչև 17:00:

<u>ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.</u>

➢ աճուրդի վերաբերյալ ծանուցումներն իրականացվելու են հայտում ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով, որը համարվում է պատշաճ ծանուցում և հայտատուն կրելու է իր կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումները, գրությունները, արձանագրությունները և այլ փաստաթղթերը չստանալու, չկարդալու անբարենպաստ հետևանքները:

➢ Աճուրդի կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում լոտի/լոտերի/ որակի, ֆիզիկական վիճակի, բնութագրի, նկարագրի համար: Աճուրդում գործում

է հետևյալ սկզբունքը՝ աճուրդի մասնակիցը տեսել է լոտը, համաձայնել է և չի առաջնորդվել միայն հայտարարության մեջ նշված նկարագրությամբ ։

➢ Եթե աճուրդի են ներկայացված մեկից ավելի լոտեր, ապա դրանց վաճառքն իրականացվում է աճուրդի մասին հայտարարությունում շարադրված հերթականությամբ։

ԾԱՆՈՒՑՈՒՄ.

- Աճուրդի ողջ ընթացքը ձայնագրվելու է և կարող է տեսագրվել ։
- Աճուրդը կազմակերպվում և անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակայինսակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» թիվ 116-Ն հրամանով /հրամանի հղումը՝ *https://www.arlis.am/hy/acts/208684/* և սույն հայտարարությամբսահմանված կարգով, որոնք հանդիսանում են աճուրդի անցկացման կանոնակրագ։

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք նամակ գրելով *Arthur.apikyan@gmail.com* էլեկտրոնային փոստին յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-ց մինչև 17:00-ն։

Աճուրդի կազմակերպիչ՝

Աշոտ Մանուկյանի սնանկության գործով կառավրիչ Ա. ԱՊԻԿՅԱՆ

- Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք ինչպես նաև համայնքները, ովքեր, վաճառվող լոտի նկատմամբ կարող են ունենալ սեփականության իրավունք, ինչպես նաև աճուրդի մասին հրապարակային ծանուցման պահից, մինչև աճուրդի անցկացման նախորդող 5-րդ աշխատանքային օրը՝ 24.06.2026թ. մինչև ժամը 18:00-ն, սույն հայտարարությամբ և ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ.-ի «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» *N 116*-Ն հրամանով սահմանված կարգով ՀՀ սնանկության դատարանի գրասենյակ ներկայացրել են աճուրդի մասնակցության հայտ, որը ընդունվել է կառավարիչի կողմից և հայտատու աճուրդն սկսելուց առնվազն մեկ օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցվել է աճուրդի մասնակցության վկայագիր ստանալու վերաբերյալ։